Վ. Գ. ՍԵՎՅԱՆ

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Կոմունիստական երիտասարդական մամուլի առաջացումն ու զարգացումը անխզելիորեն կապված են կոմերիտմիության ստեղծման, նրա պատմության հետ։ Կոմերիտական մամուլը ստեղծվել է, երբ երիտասարդական միությունների համառուսաստանյան առաջին համագումարը 1918 թ. (հոկտեմբեր-նոյեմբեր) տկիզբ դրեց երիտասարդական մասսայական քաղաքական ինքնուրույն կազմակերպությանը՝ կոմերիտմիությանը։

1918 թվականի դեկտեմբերի 15-ից ՌԿԵՄ Կենտկոմը Մոսկվայում տկտեց հրատարակել «Յունի կոմունիստ» ամսագիրը, 1919 թ. դեկտեմբերի 18-ին Պետրոգրադում լույս տեսավ «Սմենա» թերթի առաջին համարը։

ՌԿԵՄ առաջին համագումարը խոշոր դեր խաղաց նաև Անդրկովկասի կոմունիստական երիտասարդական կազմակերպությունների ձևավորման և կոմերիտական մամուլի ստեղծման գործում։ 1918 թ. դեկտեմբերի 23-ին լույս տեսավ Քութաիսիի երիտասարդ կոմունիստների «Սպարտակ» կազմակերպության օրգան «Ախալգալգրդա կոմունիստի» («Երիտասարդ կոմունիստ») թերթը, 1919 թ. հունիսի 11-ին ռուսերեն լեզվով լույս տեսավ Բաքվի և նրա շրջանների երիտասարդ կոմունիստների ինտերնացիոնալիստական միության օրգան «Երիտասարդ բանվոր» թերթը, իսկ նույն թվականի հոկտեմբերի 27-ին՝ Բաքվի կոմերիտմիության օրգան «Գյանջ փշչի» («Երիտասարդ բանվոր») թերթի առաջին համարը։

Երիտասարդական միությունների համառուսաստանյան առաջին համագումարից հետո Հայաստանի հեղափոխական երիտասարդները, նույնպես, բոլշևիկների անմիջական ղեկավարությամբ ձևնամուխ եղան կոմերիտական կազմակերպությունների և նրանց մարտական օրգանների ստեղծմանը։

Երևանի սոցիալիստ-ինտերնացիոնալիստների «Սպարտակ» կազմակերպությունը, 1919 թ. ապրիլին, իր հիմնադիր ժողովում որոշում է ընդունում՝ ունենալ տպագիր օրգան։ Սակայն սպարտակյանները թերթ հրատարակելու ժամանակ կանգնել էին դժվարությունների առաջ։ Նախ, չկային անհրաժեշտ նյութական միջոցներ և երկրորդ, դաշնակցական կառավարությունը երբեք թույլ չէր տա նրանց լույս ընծայելու իրենց թերթը։ Բայց սպարտակյանները ելքը գտան։ Նրանց խնդրանքով բանվոր-բոլշևիկ Գարեգին Հարությունյանը, որն այդ ժամանակ աշխատում էր «Կուլտուրա» կոչվող տպարանում որպես գրաշար, հանձն առավ թերթը գաղտնի շարելու գործը։ Եվ այսպես, 1919 թ. մայիսի մեկին լույս տեսավ «Սպարտակ» թերթը։ «Սպարտակը» Հայաստանում կոմերիտական մամուլի պիոներն էր։ Թերթի լույս ընծայումը հուժկու հարված էր դաշնակներին և օտար նվաճողներին։ Այն արտացոլում էր ժամանակի հեղափոխական ոգին, հոչակում կոմունիստական կոչեր՝ «Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք», «Կեցցե՛ երրորդ կոմունիստական ինտերնացիոնալը»,

«Կեցցե՛ ինտերնացիոնալի մեծ տոնը՝ Մայիսի 1-ը», «Կորչի՛ միլիտարիզմը», «Կորչի՛ կապիտալի տիրապետությունը», «Կորչի՛ իմպերիալիզմը, կեցցե՛ պրոլետարական հեղափոխությունը», «Կեցցե՛ աշխատանքի գերիշխանությունը», «Կեցցե՛ սոցիալիստական հեղափոխությունը» և այլն։ Թերթը Երևանից բացի տարածվեց նաև Հայաստանի մյուս վայրերում։ Թե այդ օրերին «Սպարտակ» թերթն ինչպիսի մեծ իրարանցում ու տագնապ էր առաջացրել դաշնակների և օտարերկրյա գաղութարարների շրջանում, վկայում է այն փաստը, որ Երևանի անգլիական և ամերիկյան իշխանությունները դաշնակներից պահանջեցին թարգմանել թերթի նյութերը և ներկայացնել իրենց։ Կատարելով տերերի հրամանը, դաշնակցականն «կառավարությունը» անհապաղ արգելեց թերթը։ Այն հնարավորություն չունեցավ ծավալել իր գործունեությունը, և հրատարակվեց ընդամենը մեկ անգամ, սակայն թերթի սերմանած հատիկներն առողջ էին և տվին հարուստ բերք։

«Սպարտակին» հաջորդած մյուս հայերեն կոմերիտական օրգանը լույս տեսավ Սովետական Ադրբեջանում։ 1920 թ. Բաքվում կայացած Ադրբեջանի կոմերիտմիության առաջին համագումարի որոշմամբ հոկտեմբերի 21-ից սկսեց լույս տեսնել Ադրբեջանի կոմերիտմիության կենտրոնական և Բաքվի կոմիտեների օրգան «Մոլոդոյ կոմունիստ» թերթը։ Ի դեպ, մինչ այդ Բաքվում 1920 թ. մայիսից լույս էր տեսնում Ադրբեջանի կոմերիտմիության Կենտկոմի օրգան «Մորոդոյ կոմունիստ» ամսագիրը, իսկ նույն թվականի հուլիսից՝ Ռուսաստանի կոմունիստական երիտասարդական միության կովկասյան երկրկոմի օրգան «Մոլոդոյ ռաբոչի» ամսագիրը։ Այդ թվականին շարունակվում էր հրատարակվել նաև ադրբեջաներեն լույս տեսնող «Դյանջ իշչի» թերթը։

Սովետական Ադրբեջանի ինտերնացիոնալ ընտանիքում 20-ական թվականներին հայ բնակչության թիվը հասնում էր մոտ 300 000-ի։ Պարզ է, որ ազգաբնակչության այդ քանակի մեջ զգալի տոկոս էր կազմում հայ երիտասարդությունը, որը Ադրբեջանի կոմերիտմիության ղեկավարությամբ, մյուս ազգերի երիտասարդության հետ ձեռք-ձեռքի իր ավանդն էր մուծում Ադրբեջանում սովետական իշխանության ամրապնդման, ժողովրդական տնտեսության վերականգնման, մշակութային կյանքի աշխուժացման գործում։

Ահա թե ինչու անհրաժեշտություն դարձավ լույս ընծայել նաև հայերեն երիտասարդական թերթ։ Այդպիսի թերթ հանդիսացավ Ադրբեջանի կոմերիտմիության կենտրոնական և Բաքվի կոմիտեների օրգան «Կարմիր երիտասարդության թերթիկը», որի անդրանիկ համարը լույս տեսավ 1920 թ. նոյեմբերի 16-ին։ «Կարմիր երիտասարդության թերթիկը» լույս էր տեսնում Բաքվում հրատարակվող Ադրբեջանի կոմունիստական կոսակցության կենտրոնական և Բաքվի կոմիտեների օրգան «Կոմունիստ» թերթի 4-րդ էջում։ Այն ընդհատումներով լույս է տեսել մինչև 1923 թ. դեկտեմբերը, 1922 թ. հունվարից մինչև 1923 թ. հոկտեմբերը թերթը բոլորովին չի հրատարակվել։ 1920 թ. լույս է տեսել 7, 1921 թ.՝ 19 և 1923 թ.՝ 6 համար։ Ընդամենը 32 համար։ Թերթի առաջին և երկրորդ համարները լույս են տեսել «Կարմիր երիտասարդության էջը» անունով։ 1923 թ. հրատարակված 6 համարներն էլ լույս են տեսել «Երիտասարդ լուսավոր» անունով։ Թերթի առաջին խմբագիրն էր Լանթ Հարությունյանը, ապա Գ. Գրիգորյանը։ «Կարմիր երիտասարդության թերթիկը» իր գործունեության մեջ կարևոր տեղ է հատկացրել դաշնակների,

մենշևիկների, մուսավաթականների և օտարերկրյա իմպերիալիստների կողմից երիտասարդության նկատմամբ տարվող հակահեղափոխական, թշնամական քաղաքականության դեմ մղվող պայքարին։ Նա իր էջերում երիտասարդությանը պարզաբանում էր այդ կուսակցությունների վարած քաղաքականությունը, մերկացնում նրանց հակաժողովրդական բնույթը։

Կոմերիտական օրգանը հեղափոխական-բացատրական եռանդուն աշխատանք էր տանում երիտասարդության մեջ, նրան դաստիարակում ինտերնացիոնալիզմի բարձր գաղափարներով։

Պրոպագանդելով հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները, թերթն իր էջերում լայն տեղ էր հատկացնում Հայաստանում երիտասարդական շարժումների լուսաբանմանը։ Տպագրված բազմաթիվ հոդվածներում թերթը վստահություն է հայտնում, որ Ռուսաստանի հերոսական կոմերիտմիության օրինակով «շուտով Հայաստանի և Վրաստանի աշխատավոր երիտասարդությունն էլ ձեռք-ձեռքի տված Ադրբեջանի երիտասարդության հետ կպաշտպանի ամբողջ Անդրկովկասի հեղափոխությունը և նրա ժողովուրդների եղբայրությունը»[1]։

Ողջունելով Հայաստանի աշխատավոր երիտասարդությանը Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու առթիվ, «Կարմիր երիտասարդության թերթիկը» 1920 թ. դեկտեմբերի 10-ին «Ճակատագրական վախճանից հետո» առաջնորդողում շարադրում է այն խնդիրները, որոնք դրված են Հայաստանի կոմերիտական կազմակերպությունների առաջ. «...Հայաստանի քարուքանդության հեղինակների աշխատավորությանը թողած այսօրվա միակ ժառանգությունը՝ ավերվածությունն ու սովն է. ահա ամենասարսափելի կացությունը, որից պետք է ազատվել։ Եվ անգիտակից մատսայի ազգային բմբռնումների վրա իր անջնջելի դրոշմը դրած պատմական շովինիզմը, որը հարևան ժողովուրդների դժբախտությունների և թշնամությունների միակ գաղտնիքն է եղել, պետք է այլևս արմատախիլ անել ու դրա փոխարեն ստեղծել աշխատավոր ժողովուրդների բարի հարևանությունն ու եղբայրությունը»[2]։

«Կարմիր երիտասարդության թերթիկը» նյութեր է հրատարակել նաև «Խորհրդային Ռուսաստան», «Արևմուտքի երիտասարդությունը մեզ հետ», «Խորհրդային Միության երկրներում», «Արտասահմանում», «Անդրկովկասում» և այլ խորագրերով, որտեղ նկարագրում էր այդ երկրների երիտասարդության իրական վիճակը, նրա կյանքն ու գործունեությունը, պարզաբանում երիտասարդության անելիքներն ու խնդիրները։ «Կարմիր երիտասարդության թերթիկի» էջերում մշտապես լուսաբանվում էր Սովետական Հայաստանի աշխատավոր երիտասարդության առօրյան, կոմերիտական կազմակերպությունների աշխատանքն ու խնդիրները։ Նա Ադրբեջանում պրոպագանդում էր հայ աշխատավոր երիտասարդության ձեռք բերած նվաճումները, ժողովուրդների բարեկամության կոշեր արձակում, կազմակերպում և ոգևորում երիտասարդությանը կուսակցության կողմից կոմերիտական կազմակերպությունների առջև դրված խնդիրների կատարման գործում։

Թերթն իր առջև դրված խնդիրներն իրագործելու համար լայնորեն օգտագործում էր թղթակցական ակտիվի ուժերը։ Նա իր թղթակցական ակտիվի-

---

1 «Կարմիր երիտասարդության թերթիկ», № 5, դեկտեմբերի 10, Բաքու, 1920։
2 «Կարմիր երիտասարդության թերթիկ», № 3, նոյեմբերի 26, 1920։

շրջանակները աստիճանաբար լրացնում էր նաև հարևան եղբայրական հանրապետություններում ապրող և աշխատող երիտասարդ թղթակիցների հաշվին, մանավանդ Հայաստանում, ուր 1920 թ. դեռևս չկար կոմերիտական թերթ։ «Կարմիր երիտասարդության թերթիկին» Հայաստանից թղթակցում էին Ներսես Խերանյանը, Հրանտ Եկավյանը, Գեորգ Պարիսը և ուրիշներ։ Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ երեք տարի անց՝ 1923 թ., երբ Հայաստանում սկսեց լույս տեսնել «Ավանգարդ» թերթը, «Կարմիր երիտասարդության թերթիկը» պարբերաբար արտատպումներ կատարելով «Ավանգարդ»-ից, սերտ կապ հաստատեց հարևան հանրապետության երիտասարդության կյանքն արտացոլող թերթի հետ։

Սակայն 1923 թ. դեկտեմբերին թերթն ընդհատվեց։ Չնայած իր կարճատև կյանքին, այն Սովետական Ադրբեջանի բազմազգ ընտանիքում խոշոր դեր խաղաց հայ կուլտուրայի զարգացման, ինտերնացիոնալ կապերի ուժեղացման գործում։

1921 թ. հունվարի 19-ին լույս տեսավ կոմերիտական մամուլի առաջնեկ՝ Հայաստանի կոմունիստական երիտասարդական միության կենտրոնական և Երևանի գավառային կոմիտեների օրգան «Երիտասարդ կոմունիստ» թերթի առաջին համարը։

«Երիտասարդ կոմունիստի» առաջին երեք համարները լույս տեսան Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի և հեղկոմի օրգան «Կոմունիստ» թերթի չորրորդ էջում։ 1921 թ. մայիսի մեկից նա սկսեց լույս տեսնել որպես առանձին, ինքնուրույն թերթ։

«Երիտասարդ կոմունիստի» գլխավոր թեման է եղել ժողովրդական տնտեսության վերականգնման, ժողովուրդների բարեկամության, երիտասարդության ինտերնացիոնալ դաստիարակության հարցերը։ Նրա գործունեության մեջ հատուկ տեղ է գրավում Սովետական Ռուսաստանի և անդրկովկասյան հանրապետությունների նվաճումների պրոպագանդան։ Թերթն իր էջերում համախակի հետաքրքիր տեղեկություններ է տպագրել Սովետական Ռուսաստանի, Ադրբեջանի և Վրաստանի կոմերիտական կազմակերպությունների կատարած աշխատանքների մասին։ Թերթը կոմերիտական կազմակերպությունների միջոցով սկսեց լայն շարժում ծավալել երիտասարդությանը գրագիտություն ուսուցանելու, նրա կրթության գործը կազմակերպելու ուղղությամբ։ «Բանվոր-երիտասարդությանը սոցիալիստական դաստիարակություն տալը մեր ամբողջ աշխատանքի հիմքն է լինելու, ազդարարում էր «Երիտասարդ կոմունիստը»։ Թերթը սիստեմատիկաբար հոդվածներ ու ինֆորմացիաներ է տպագրել հանրապետության արդյունաբերության, երկաթուղային տրանսպորտի և գյուղատնտեսության մեջ աշխատող երիտասարդության առօրյա կյանքի, նրա հայրենանվեր գործերի մասին, ոգևորել երիտասարդությանը, նրանց մեջ առաջացրել աշխատանքային խանդավառություն։ Թերթը բազմաթիվ էջեր է նվիրել գյուղատնտեսական այս կամ այն կամպանիային (գարնանացան, բերքահավաք և այլն) երիտասարդության մասնակցությանը, ընդգծելով, որ «գյուղատնտեսությունը լավ հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ է գյուղացուն ծանոթացնել գյուղատնտեսական գիտելիքների հետ և գործնական օգնություն ցույց տալ նրան»։

Թերթը երիտասարդության լայն մասսաներին պարբերաբար ծանոթացնում էր կուսակցության որոշումների հետ, պարզաբանում դրանց էու-

թյունը, նշում կուսակցության որոշումների կատարման գործում երիտասարդության աներիզներն ու խնդիրները։

«Երիտասարդ կոմունիստը» լայնորեն պրոպագանդում էր բոլշևիկյան կուսակցության հեղափոխական գործիչների կյանքն ու գործունեությունը։ Նրա էջերում ծավալուն հոդվածներ են տպագրվել՝ նվիրված Ստ. Շահումյանի, Կարլ Լիբկնեխտի, Արմենակ Բուդաղյանի, Հրաչ Պողոսյանի հիշատակին։ 1922 թ. սեպտեմբերի 27-ի համարը ամբողջությամբ նվիրված է Բաքվի 26 կոմիսարների նահատակման չորրորդ տարեդարձին։

«Երիտասարդ կոմունիստին» ակտիվորեն թղթակցել և ուղղություն են տվել Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, Գումեդինը, Հենրի Գաբրիելյանը, Լևոն Արիսյանը, Հրանտ Եկավյանը, Տիգրան Խորունին, Սահակ Ղազարյանը, Գևորգ Պարիսը և ուրիշներ։ Թերթը սկզբում խմբագրել է Ներսես Խերանյանը, որը միաժամանակ հանդիսանում էր ՀԿԵՄ Կենտկոմի քաղ-լուսավորական բաժնի վարիչը։ 1922 թ. սկզբից մինչև դեկտեմբեր ամիսը այն խմբագրել է Կարո Շահբազյանը։ Այդ ժամանակ խմբագրական կոլեգիայի կազմում էին Սուրիմանյանը, Լ. Արիսյանը և Ռիրյուզանը[3]։ 1923 թ. հունվարից մինչև ապրիլ թերթը խմբագրել է Յամփրթը (Հ. Դանիելյանն)։ Խմբագրական կոլեգիայի մեջ էին մտնում նաև Տիգրան Խորունին և Խաչիկ Մանոյանը[4]։ «Երիտասարդ կոմունիստը» լույս էր տեսնում շաբաթական երկու անգամ (լույս է տեսել ընդամենը 109 համար), սկզբում հազար, ապա հազար հինգհարյուր օրինակ տպաքանակով։

Անշեղորեն կիրառելով մեծ Լենինի ցուցումները, բոլշևիկյան մամուլի աշխատանքների և հատկապես բանվորա-գյուղացիական թղթակիցների մասին, թերթն, իր առաջին իսկ համարից դիմեց անմիջականորեն արտադրությունում աշխատող երիտասարդ բանվորներին, գյուղացիներին, աշխատավոր մտավորականությանը, նրանց կոչ անելով ակտիվորեն մասնակցել հարազատ թերթին, գրել իրենց հուզող հարցերի մասին։ Արձագանքելով թերթի կոչին, նրան սկսեցին աշխատակցել տասնյակ հարյուրավոր պատանիներ ու աղջիկներ, որոնցից շատերը հետագայում ձեռք բերեցին լրագրողին անհրաժեշտ ունակություններ, դարձան առաջին կոմերիտական ժուռնալիստները։ Թերթն իր թղթակցական ակտիվի շրջանակները լրացնում էր նաև հանրապետության գյուղական շրջաններում ապրող երիտասարդության հաշվին։

Այսպիսին էր սովետահայ երիտասարդական մամուլի առաջին ծիծեռնակը։ 1923 թվականի մայիսին «Երիտասարդ կոմունիստը» փստաֆետը հանձնեց «Ավանգարդին»։

1921 թ. հունվարի 8-ին լույս տեսավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգան «Աղքատ գյուղացի» թերթի առաջին համարը։ Նույն թվականի հունվարից մինչև փետրվարը նրա չորրորդ էջում լույս էր տեսնում ՀԿԵՄ Կենտկոմի օրգան «Կարմիր երիտասարդի թերթիկը»։ Փետրվարյան ավանտյուրայի պատճառով այն չկարողացավ լայնորեն ծավալել իր գործունեությունը և դադարեց լույս տեսնելուց, հրատարակվեց ընդամենը չորս համար[5]։

---

3 Տե՛ս ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, գ. 38։

4 Նույն տեղում, գ. 107։

5 «Կարմիր երիտասարդի թերթիկի» առաջին համարը մեր ձեռքը չի ընկել (Վ. Մ.)։

«Կարմիր երիտասարդի թերթիկը» կոչված էր հիմնականում արտացոլելու գյուղական երիտասարդության կյանքը, նրա ցանկություններն ու պահանջները։ Թերթը Հայաստանի կոմերիտմիության կազմակերպական շրջանում լայն աշխատանք է ծավալել գյուղական վայրերում երիտասարդության քաղաքական ակտիվությունը բարձրացնելու, կոմերիտական կազմակերպություններ ստեղծելու համար։ Նա մատնանշել է Սովետական Ռուսաստանի երիտասարդության փորձը՝ երկրում բանվորա-գյուղացիական իշխանության ամրապնդման, տնտեսական և կուլտուրական շինարարության ասպարեզում, կոչ է արել Հայաստանի աշխատավոր երիտասարդներին Ռուսաստանի երիտասարդության օրինակով ամրապնդել սովետական իշխանության հիմքերը։

«Միության աշխատանքները գյուղում» ընդհանուր խորագրի տակ «Կարմիր երիտասարդի թերթիկը» հետաքրքիր նյութեր է տպագրել գյուղական կոմերիտական կազմակերպությունների աշխատանքի, նրանց կողմից կազմակերպվող միջոցառումների վերաբերյալ։ Օրինակ, 1921 թ. փետրվարի 5-ի համարում ծավալուն ինֆորմացիա է զետեղված Կուլպ գյուղի կոմերիտական կազմակերպության ժողովի մասին։ Այդ ժողովի աշխատանքներին մասնակցել են նաև կոմերիտական ղեկավար աշխատողները՝ Կ. Պապյանն (Կարճիկն) ու Ալեքսանդր Տեր-Հարսեղյանը, որոնք զեկուցել են «Երիտասարդ կոմունիստների դերը հեղափոխական շարժման մեջ» թեմայով։ Այդ հարցի առթիվ ընդունված որոշման մեջ ասվում է. «Երիտասարդությունը պետք է դուրս գա հին, ճահճացած միջավայրից և պիտի հետևի Ռուսաստանի կարմիր երիտասարդության օրինակին, որը համաշխարհային աշխատավորների շահերի պաշտպանությանն է նվիրվել»[6]։

Թեև «Կարմիր երիտասարդի թերթիկի» հնարավորությունները սուղ էին, բայց, այնուհանդերձ, նա իր ուշադրության կենտրոնում էր պահում Անդրկովկասի մյուս վայրերի երիտասարդության հարցերը, լուսաբանում այդ երիտասարդության կյանքը։ «Վրաստանի մեր ընկերները» հոդվածում հեղինակը նկարագրում է, թե ինչպես Վրաստանի մենշևիկյան կառավարությունը կոմունիստներին ու կոմերիտականներին բանտ է նետում, նրանց ենթարկում զանազան հարձակումների ու խոշտանգումների, բայց «մեր ընկերները... (խոսքը բոլշևիկների մասին է—Վ. Ս.) առանց կասկածի պնդում են, որ Ռամիշվիլու (մենշևիկյան կառավարության պարագլուխներից մեկը—Վ. Ս.) ջանքերն իզուր են անցնում. նա ինչքան հարձակում է նրանց (բոլշևիկներին—Վ. Ս.), մեր ընկերներն ավելի լավ են կազմակերպում և ուժեղանում»։

* *
*

Փետրվարյան ավանտյուրայից հետո՝ 1921 թ. կեսերին կոսակցական կազմակերպությունների անմիջական ղեկավարությամբ Հայաստանի կոմերիտմիության Կենտկոմը մի շարք լուրջ միջոցառումներ ձեռնարկեց կոմերիտական կազմակերպությունների մարտունակությունը բարձրացնելու, նրանց կազմակերպչորեն ամրապնդելու, երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում երիտասարդության ակտիվ մասնակցությունն ապահովելու համար։

6 «Կարմիր երիտասարդի թերթիկ», № 3, փետրվարի 5, Երևան, 1921։

Կուսակցական ապարատի հետ միասին վերակառուցվեց նաև կոմերիտական ապարատը։ Հանրապետությունում ստեղծվեցին 9 գավառային և 39 շրջանային կոմիտեներ[7]։ Սկսվեց կոմերիտմիության գավառային համագումարների (կոնֆերանսներ) նախապատրաստման ու անցկացման լայն կամպանիա։ Ի դեպ, մինչև այդ կոմերիտմիության ղեկավար օրգանները չէին ընտրվում, այլ նշանակվում էին։ Ռուսաստանի կոմերիտմիության Կենտկոմի որոշման համաձայն 1921 թ. հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 10-ը ինչպես մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում անցկացվեցին գավառային համագումարներ՝ կոմերիտմիության ղեկավար օրգաններ ընտրելու համար։ Նույն թվականի օգոստոսի 20-ին հրավիրվեց նաև Հայաստանի կոմերիտմիության առաջին համագումարը, որով ավարտվեց հանրապետության կոմերիտմիության կազմակերպական ձևավորումը։

Կոմերիտմիության քաղաքական, տնտեսական և գործնական խնդիրները երիտասարդությանը հասցնելու, կոմերիտական ակտիվի ոստուցումը կազմակերպելու նպատակով՝ 1921 թ. հուլիսի 24-ից ներսես Խերանյանի խմբագրությամբ սկսեց լույս տեսնել Հայաստանի կոմերիտմիության Կենտկոմի «Բյուլետեն»։ Ահա թե ինչ է գրել իր խնդիրների մասին խմբագրությունը։

«Որպեսզի մեր միության ընդհանուր գործը հնարավոր լինի կանոնավորել, անհրաժեշտ է դառնում մեր յուրաքանչյուր կազմակերպության և օրգանների կազմավորման ու նրանց աշխատանքների մասին ընդհանրապես և երիտասարդական միության ու նրա հերթական խնդիրների դերի մասին՝ մասնավորապես, մշակված թեզիսները, հրահանգները, շրջաբերականները ամփոփված լինեն մի տեղ և ծառայեն իբրև ձեռնարկ մեր միության յուրաքանչյուր գործչի համար»[8]։ Հասկանալի է, որ հետապնդելով այսպիսի նպատակներ, նա հիմնականում պարզաբանում էր կոմերիտական կազմակերպական հարցեր և մեծ մասամբ տպագրում էր կոմերիտմիության Կենտկոմի որոշումներն ու շրջաբերականները, երիտասարդությանը ծանոթացնում կոմերիտական կազմակերպությունների կառուցվածքի հետ, կազմակերպում կոմերիտական ակտիվի ուսուցումը։

«Բյուլետենի» առաջին համարում տպագրվել է Հայաստանի կոմերիտմիության Կենտկոմի շրջաբերականը՝ Հայաստանի գավառներում կոմերիտմիության համագումարների կամպանիան կազմակերպված անցկացնելու մասին, ամփոփել կոմերիտական կազմակերպությունների արդյունքները, մշակել հետագա աշխատանքների կոնկրետ ու գործնական միջոցառումներ, կազմ պատրաստ դիմավորել 1921 թ. հոկտեմբերին կայանալիք կոմերիտմիության չորրորդ համառուսական համագումարը[9]։

«Բյուլետենը» լուսաբանում էր նաև կուսակցության որոշումները, պարզաբանում այդ որոշումների էությունը։ Արժե հիշատակել, օրինակ, «Խորհրդային իշխանությունների տնտեսական քաղաքականությունը և կոմերիտմիությունը» հոդվածը, որտեղ ցույց է տրվում նոր տնտեսական քաղաքականության նշանակությունը երկրի ժողովրդական տնտեսության զարգացման գործում, հանգամանորեն շարադրվում այդ քաղաքականության իրականացման

7 «Հայաստանի կոմունիստական պարտիայի ուրվագծեր», Երևան, 1963, էջ 326։
8 «Բյուլետեն» № 2, օգոստոսի 14, 1921։
9 «Բյուլետեն» № 1, հուլիսի 24, Երևան, 1921։

գործում կոմերիտական կազմակերպությունների, ամբողջ երիտասարդության խնդիրները։

Թեև լույս տեսավ «Բյուլետենի» ընդամենը երեք համար, բայց այն նպաստեց կոմերիտական ակտիվի ուսուցման, դաստիարակության գործին։ «Բյուլետենը» կոմերիտական ամսագրի նախատիպ էր և փաստորեն կատարում էր ամսագրի դեր։

1921 թ. փետրվարի 25-ին Վրաստանում սովետական իշխանություն հաստատվելուց անմիջապես հետո ընդհատակից Թիֆլիս վերադարձան կոմերիտական մի խումբ աշխատողներ, որոնք բոլշևիկների ղեկավարությամբ ու օգնությամբ ստեղծեցին Վրաստանի կոմերիտմիության կենտրոնական և Թիֆլիսի կոմիտեները։ Վրաստանի կոմերիտական կազմակերպությունները Կենտկոմի ղեկավարությամբ ձեռնամուխ եղան երկրի քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնմանը, երիտասարդության կոմունիստական դաստիարակությանը։

Այդ տեսակետից խոշոր դեր կատարեց Վրաստանի կոմերիտմիության և Թիֆլիսի կոմիտեների օրգան «Կարմիր երիտասարդություն» թերթը, որի անդրանիկ համարը լույս տեսավ 1921 թ. մարտի 26-ին։ Այն լույս էր տեսնում «Կարմիր աստղ» թերթի չորրորդ էջում, երբեմն էլ առանձին։ 1921 թ. հրատարակվել է 39, իսկ 1922 թ.՝ 20 համար։ Ընդամենը 59 համար։ 1922 թ. մայիսի 18-ից սկսած թերթը հրատարակվում էր «Անդրկովկասյան երիտասարդություն» անունով՝ կենտրոնական և Թիֆլիսի կոմիտեների օրգանը։ Նրան ակտիվորեն թղթակցել են Բ. Զնելաձեն, Գ. Դեդերիանին, Շ. Ագնավուրյանը, Միրասը, Ս. Հարությունյանը, Ս. Քալանթարյանը և ուրիշներ։ Թերթը խմբագրել է Ս. Մելիքսեթյանը։ «Կարմիր երիտասարդությունը» իր թղթակիցներն ուներ նաև Հայաստանում։ Նրա էջերում բազմաթիվ հոդվածներով հանդես են եկել Ներսես Խերանյանը և Հրանտ Եկավյանը։

«Կարմիր երիտասարդություն» թերթի գործունեության մեջ կարևոր տեղ էր գրավում ժողովրդական տնտեսության վերականգնման համար մղվող պայքարում երիտասարդության մասնակցությունը ապահովելու հարցը։ «Պայքարի և գիտության միջոցով կհասնենք կոմունայի. տնտեսական քայքայման դեմ մաքառելը՝ հաղթանակի գրավականն է»,—ազդարարում էր «Կարմիր երիտասարդությունը»[10]։ Թերթը բազմաթիվ էջեր է նվիրել երիտասարդության շրջանում սովետական իշխանության նոր տնտեսական քաղաքականության պրոպագանդման հարցերին։

Պարզաբանելով նոր տնտեսական քաղաքականության դերը ժողովրդական տնտեսության զարգացման գործում, թերթը աշխատավոր երիտասարդությանը կոչ էր անում ակտիվորեն աջակցել այդ քաղաքականության լիակատար իրականացմանը։ «Մեր հիմնական և գլխավոր գործն է,—գրում էր թերթը, — պարենտուրքի հավաքմանը ակտիվ մասնակցությունն ցույց տալը...»[11]։

«Կարմիր երիտասարդությունը» հատուկ տեղ էր տալիս երիտասարդությանը պրոլետարական ինտերնացիոնալիզմի և բանվոր դասակարգի հեղափոխական տրադիցիաներով դաստիարակելու հարցերին։

---

10 «Կարմիր երիտասարդություն», № 1, մարտի 26, Թիֆլիս, 1921։

11 «Կարմիր երիտասարդություն», № 27, սեպտեմբերի 25, Թիֆլիս, 1921։

«Կարմիր երիտասարդությունը» հետևողականորեն քննադատել է դաշնակների, մենշևիկների և մուսավաթիստների նացիոնալիստական, ռեակցիոն քաղաքականությունը, տոգորել երիտասարդությանը իր իսկական դասակարգային շահերի պաշտպանության գաղափարով։ Թերթի էջերում տպագրված բազմաթիվ հոդվածներն ու թղթակցությունները կենդանի բողոք են նացիոնալիստական կոսակցությունների հակաժողովրդական քաղաքականության դեմ։

Ինչպես հայտնի է, սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից Անդրկովկասի հանրապետությունները եղբայրական սերտ հարաբերությունների մեջ մտան, որոնք գնալով վերաճեցին ամուր կապերի։ Փոխադարձ օգնության և իրավահավասարության հիման վրա ստեղծված այդ կապերի բարձր աստիճանը հանդիսացավ 1922 թ. մարտի 12-ին կազմակերպված Անդրկովկասյան Ֆեդերացիան։

«Կարմիր երիտասարդությունն» թերթիկը երիտասարդության շրջանում լայն պրոպագանդա և ագիտացիա ծավալեց Ֆեդերացիայի քաղաքական ու տնտեսական նշանակության մասին։ Տպագրված հոդվածներում ու թղթակցություններում երիտասարդության լայն զանգվածներին բացատրվում էր, որ Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծումը հանդիսանում է կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության խոշոր հաղթանակը, որը լայն հեռանկարներ բացեց երկրամասի հանրապետությունների ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի զարգացման համար։

«...Ողջունում ենք խորհրդային իշխանությանը, գրում էր թերթը, որը առաջին անգամ ձեռք վերցրեց անդրկովկասյան պրոլետարիատի միացման գործը և գտնում ենք, որ միայն անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիայի մեջն է մեր փրկությունը արևմտյան կապիտալիստներից»[12]։

Բանվոր երիտասարդության կենցաղի բարելավման, աշխատանքի և կրթության հարցերը հատուկ տեղ են գրավել թերթի գործունեության մեջ։ Թերթի էջերում իր արտացոլումն է գտել քաղաքի ու գյուղի կապերի ամրապրնդման, քաղաքի կողմից գյուղին ցույց տրվող օգնության հարցերը։

Վրաստանի կոմերիտմիության հայերեն օրգանն իր էջերում հատուկ տեղ է հատկացրել Հայաստանի կոմերիտական կազմակերպությունների կյանքի լուսաբանմանը։ Նրանում զետեղված հոդվածներում ցույց է տրված, թե ինչպես Հայաստանի երիտասարդությունը ոգևորված կոմունիստական կուսակցության մեծ նախագծումներով, բայն պայքար է ծավալել ժողովրդական տնտեսության վերականգնման, գիտության և կուլտուրայի զարգացման բոլոր բնագավառներում։

«Սովետական Հայաստան», «Հայաստանի կարմիր երիտասարդությունը տնտեսական ֆրոնտում», «Կարմիր Հայաստանում» և այլ խորագրերի տակ սիստեմատիկաբար ինֆորմացիաներ էին տպագրվում Հայաստանի կոմերիտական կազմակերպությունների աշխատանքների մասին։

Այսպիսով, 1921—1922 թթ. «Կարմիր երիտասարդությունը» նշանակալից դեր խաղաց երիտասարդության կազմակերպման, նրա քաղաքական-գաղափարական դաստիարակության, ինչպես նաև անդրկովկասյան ժողո-

12 «Կարմիր երիտասարդություն», № 11—50, մարտի 18, Թիֆլիս, 1922։

վուրդների երիտասարդության ինտերնացիոնալ կապերի ամրապնդման և հայ կուլտուրայի զարգացման գործում։

Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հետ միասին Հյուսիսային Կովկասի քաղաքների ու գյուղերի հայ աշխատավորությունը, այդ թվում և երիտասարդությունը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ օտարերկրյա ինտերվենցիայից և քաղաքացիական պատերազմից հաղթականորեն դուրս գալուց հետո ձեռնամուխ եղավ սոցիալիստական խաղաղ շինարարության։

1921 թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին Կրասնոդարում հրատարակվում էր Ռուսաստանի կոմունիստական երիտասարդական միության Կուբան-Չերնոմորյան շրջանային հայ կազմակերպության բյուրոյի օրգան «Կարմիր երիտասարդության թերթիկը»։ Այն լույս է տեսել Ռուսաստանի կոմունիստական կուսակցության Կրասնոդարի հայկական սեկցիայի օրգան «Կարմիր աստղ» թերթի էջերում, 2400 օրինակ տպաքանակով։ Հրատարակվել է ընդամենը 5 համար։ Հանգես գալով երկրի համար ստեղծված տնտեսական ծանր պայմաններում, թերթիկի առաջնահերթ խնդիրներից մեկը եղավ՝ կազմակերպել երիտասարդության պայքարը՝ հանուն աշխատավորության կենսամակարդակի բարձրացման, հանուն երջանիկ կյանքի ստեղծման։ «Կարմիր երիտասարդության թերթիկը» իր առաջին համարի «Սթափվիր հայ երիտասարդություն» առաջնորդողում շարադրել է ներկա մոմենտում երիտասարդության առջև ծառացած խնդիրները. «Գործի սկիզբն արդեն դրված է. հարկավոր է միայն գործել, անհրաժեշտ է լայն ու եռանդուն գործունեություն ցույց տալ այն գործարաններում, ուր հայ երիտասարդ աշխատավոր մասսաներ կան... Կուբան-Չերնոմորյան շրջանի հայ երիտասարդ բանվորությունը չպետք է մոռանա նաև Հայաստանի երիտասարդ աշխատավորությանը։ Նա անհրաժեշտորեն պարտավոր է իր մտավոր և այլ ընդունակություններով օգնության հասնել իր եղբորը՝ Հայաստանին»[13]։

Թերթիկը երիտասարդությանը պարզաբանում է, որ Հայաստանի աշխատավորությունը գործուն օգնություն կարող է ստանալ միմիայն Հյուսիսից՝ Սովետական Ռուսաստանից, որը կարող է տալ աշխատավորության շահերին նվիրված գործունյա մշակներ[14]։

Թերթիկում հատուկ տեղ էր տրվում կոմերիտական կազմակերպությունները կազմակերպչորեն ամրապնդելու, առաջավոր երիտասարդությանը, հատկապես աղջիկ երիտասարդությանը, կոմերիտմիության մեջ ընդգրկելու հարցերին։

1921 թ. սեպտեմբերի 1-ին «Հայ աշխատավոր աղջկան» հոդվածում «Հայսեկի ԿԵՄ անդամուհի» ստորագրությամբ հեղինակը դիմելով աղջիկ երիտասարդությանը, գրում է. «Միացեք մեզ հետ, ամենքս մեկի և մեկս ամենքի համար. ցույց տվեք, որ դուք էլ կարող եք հայ երիտասարդի հետ ձեռք-ձեռքի տված ճանապարհ բանալ դեպի կոմունիզմը, ապացուցեք, որ հայ աղջիկն էլ կարող է կռվել ստրկության ու խավարի դեմ, որ նա էլ քացի օրորոցից, խոնանոցից, մանկանոցից ունի մեծ նպատակ, մի մեծ կոչում, այն է՝ միանալ մեզ հետ, մտնել մեր շարքերը և խտացնել այն»։

---

13 «Կարմիր երիտասարդության թերթիկ», 1, հունիսի 12, Կրասնոդար, 1921։

14 Նույն տեղում։

«Պայքար սովի դեմ» ընդհանուր խորագրի տակ թերթիկը պարբերաբար ինֆորմացիաներ էր տպագրում այն մասին, թե ինչով և ինչպես է օգնում երիտասարդությունը Մերձվոլգյան սովյալներին։

«Կարմիր երիտասարդության թերթիկը» սեպտեմբերյան համարներից մեկում հաղորդում էր, որ օգոստոսի 21-ին Ռուսաստանի կոմերիտմիության Կուբան-Չերնոմորյան շրջանում հայկական սեկցիայի նախաձեռնությամբ տեղի է ունեցել երեկույթ, որի մասնակիցներից հավաքած գումարը հատկացվել է սովյալներին։ Լեպել քաղաքի երիտասարդությունն իրենց այգու ամբողջ միրգը և աշխատավարձի 10 տոկոսը հատկացրել են Մերձվոլգյան սովյալներին[15]։

1921 թ. նոյեմբերի 7-ին Երևանում լույս տեսավ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի, Երևանի կոմիտեի և ժողկոմխորհի օրգան «Наша правда» թերթը։ Ուղիղ 7 օր հետո՝ նոյեմբերի 15-ին նրա չորրորդ էջում լույս տեսավ Հայաստանի կոմերիտմիության կենտրոնական և Երևանի կոմիտեների օրգան «Красная молодежь» թերթիկի առաջին համարը։ 1921 թ. լույս է տեսել 6, 1922 թ.՝ 7 համար։ Ընդամենը 13 համար։ Այդ թերթիկը խմբագրել է Բիրյուզան։ Խմբագրական կոլեգիայի կազմում էին Կարո Շահբազյանը, որը 1922 թ. խմբագրում էր «Երիտասարդ կոմունիստ» թերթը[16]։ «Красная молодежь»-ին ակտիվորեն թղթակցել են Համո Վարդանյանը, Լևոն Արիսյանը և ուրիշներ։ Ռուսերեն լեզվով հրատարակվող Հայաստանի կոմերիտմիության այս թերթիկը հանդիսացավ այն օղակը, որի միջոցով եղբայրական մյուս հանրապետությունների կոմերիտական կազմակերպությունները հաղորդակից էին լինում Սովետական Հայաստանի նվաճումներին, երիտասարդության ձեռք բերած հաջողություններին։

Կոմերիտական օրգանը հատուկ տեղ էր տալիս երիտասարդության աշխատանքային դաստիարակության հարցերին, մատնանշում այն խնդիրները, որոնք դրված են արտադրության մեջ անմիջապես աշխատող պատանիների ու աղջիկների առջև։ Օրինակ՝ 1922 թ. փետրվարի 15-ին թերթը տպագրեց «Ինչ պետք է անի կոմերիտականը երկաթուղային տրանսպորտում» հոդվածը («Սպուտնիկ» ստորագրությամբ), որտեղ հեղինակը ցույց է տալիս կոմերիտական կազմակերպությունների դերը երկաթուղային տրանսպորտի զարգացման գործում, նշում, որ «Կոմերիտականը պետք է դառնա տրանսպորտի լավագույն տերը, ...Դառնա օրինակելի ագիտատոր, որը կյանքում խոսքը միացնում է գործին»։

Թերթիկը կոմերիտական կազմակերպությունների ուշադրությունը հրավիրում էր աղջիկ երիտասարդության շրջանում տարվող աշխատանքի վրա։ Անհրաժեշտ է հոգատար, զգույշ և հետևողական աշխատանք տանել աղջիկների հետ, ազդարարում էր թերթիկը[17]։

«Красная молодежь»-ը Սովետական Հայաստանի երիտասարդության առաջին ռուսերեն թերթն էր, որի հրատարակումը դադարեց 1922 թ. ապրիլին։ Թերթը հանդիսացավ այն հիմնաքարը, որի վրա հետագայում ստեղծվեց Հայաստանի կոմերիտմիության օրգան «Комсомолец» թերթը։

---

15 «Կարմիր երիտասարդության թերթիկ», սեպտեմբերի 1, 1921։
16 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 48, գ. 38։
17 «Կրասնայա մոլոդյոժ», № 6, մարտի 22, Երևան, 1922։

Երևանում լույս տեսնող «Երիտասարդ կոմունիստը» հնարավորություն չոստեր բազմակողմանիորեն լուսաբանել բանվոր-երիտասարդության ցանկությունները ու պահանջները, նրա գիտակցությանը հասցնել կոստակցության և կառավարության քաղաքականությունը, ինչպես ներքին, այնպես էլ միջազգային կյանքի հարցերում։ Անհրաժեշտ էր կազմակերպել և ապահովել երիտասարդության ակտիվ մասնակցությունը երկրի տնտեսական վերականգնումը իրականացնելու գործին, լայնորեն լուսաբանել այդ ժամանակ ստեղծված երկաթուղային չորս շրջանների կոմերիտականների (Ալեքսանդրապոլ, Ղարաքիլիսա, Սանահին, Երևան, որոնք իրենց մեջ ընդգրկում են 28 բջիջներ, ավելի քան 250 կոմերիտականներով)[18] և երկաթուղում աշխատող տասնյակ հարյուրավոր երիտասարդության կյանքը։

Այդ նպատակով որոշվեց Ալեքսանդրապոլի գծի կոմիտեի օրգան «Կարմիր ուղի» թերթի 4-րդ էջում հրատարակել Հայաստանի կոմերիտմիության Կենտկոմի օրգան «Երիտասարդ բանվորը», որի առաջին համարը լույս տեսավ 1922 թ. հունիսի 30-ին[19]։ «Երիտասարդ բանվորը» 1922 թ. հունիսից մինչև սեպտեմբերը լույս է տեսել 7 համար։ 1923 թ. հունվարին վերսկսել է նրա հրատարակումը և լույս տեսնելով երկու համար, դադարել է հրատարակվելուց։ Այն խմբագրում էր Հրանտ Եկավյանը։ Թերթին ակտիվորեն աշխատակցել են կոմերիտական աշխատողներ Հրաչիկ Սոխակյանը, Տինտ Շախգամյանը, Թաթոս Խաչիկօղլյանը և ուրիշներ։

Հայաստանի բանվոր երիտասարդությունը «Երիտասարդ բանվորի» միջոցով հաղորդակից էր լինում Սովետական Ռուսաստանի երիտասարդության նվաճումներին, տեղեկանում կապիտալիստական երկրներում ապրող երիտասարդության աղետալի վիճակին։

Թերթը հատուկ տեղ էր հատկացնում հակակրոնական պրոպագանդայի հարցերին։ Այդ թեմաներով գրված հոդվածներում թերթը ցույց էր տալիս կրոնի հակամարքսիստական, հակագիտական և վնասակար դերը երիտասարդության գործում։

В. Г. СЕВЯН

ВОЗНИКНОВЕНИЕ АРМЯНСКОЙ КОММУНИСТИЧЕСКОЙ МОЛОДЕЖНОЙ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ

Резюме

Возникновение армянской коммунистической молодежной печати относится к периоду 1919—1922 гг. и неразрывно связано с организацией комсомола, его историей.

Первая комсомольская газета в Армении под названием «Спартак» вышла в свет в мае 1919 г. и явилась органом Ереванской организации социал-интернационалистов «Спартак».

---

18 «Երիտասարդ բանվոր», № 1, հունիսի 30, № 2, հուլիսի 14, Ալեքսանդրապոլ, 1922։

19 Վ. Ամիրբեկյանը «Սովետական տեղական մամուլը» գրքում նշում է, որ «Երիտասարդ բանվորը» ՀԼԿԵՄ Ալեքսանդրապոլի գավկոմի օրգանն է եղել։

В ноябре 1920 г. в Советском Азербайджане вышла в свет очередная комсомольская газета (на армянском языке) — «Кармир еритасардутян тертик».

С января 1921 по апрель 1923 гг. в Ереване издавались газеты «Еритасард коммунист», «Кармир еритасарди тертик» и др.

Издававшаяся с марта 1921 г. по декабрь 1922 г. комсомольская газета «Кармир еритасардутюн» была органом ЦК КСМ Грузии и тифлисского комитета.

Армянские молодежные газеты издавались также в Советской России. В июне 1921 г. была основана газета «Банвор еритасарди тертик»— орган армянской секции Донского комитета РКСМ, а в Краснодаре с июня по сентябрь 1921 г. издавалась газета «Кармир еритасардутян тертик» — орган бюро армянской организации Кубано-Черноморского района РКСМ.

Армянская комсомольская печать с первых же дней основания вела активную борьбу за установление и укрепление Советской власти в Армении. На страницах газет освещалась внешняя и внутренняя политика нашей партии. Они сыграли большую роль в разоблачении политики контрреволюционных, националистических, мелко-буржуазных партий. Молодежная печать оказала неоценимую помощь комсомольским организациям, способствовала обеспечению активного участия молодежи в восстановлении народного хозяйства страны. С помощью молодежных газет комсомол республики вел активную борьбу за ликвидацию неграмотности, создание новой трудовой школы. Комсомольская печать стала подлинной трибуной рабоче-крестьянской молодежи, выразительницей ее стремлений и желаний.